

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ Ք

Վարդապետութիւն դպրատան Մեծին կայուսի. — Մեծն կարողս թէ և բարբարոս, այս մեծ մղումն տուաւ քաղաքակցրութեան, որ բաց ՚ի զանազան բարեկորդութեանց՝ զպրոց մալ հաստատեց սպատան մէջ ჩիքինոս որդին կրթելու համար։ Այս գարդատան ուսուցչաց մէջ փայլցաւ մասնաւորապէս Ալմինիոս, որում վարդապէտութեանցը գաղափար մը տալու համար՝ պահած են մեզ կին յիշատակարանը հարցմամբ և պատասխանեօք այս յետագայ հետաքրքրաշարժ խոսակցութիւնը կամ վէճը, որ կարծուի թէ եղած ըլլաց ընդ մէջ Ալմինիոսի և բիբինոսի։ Մեծին կարողոսի վեշտասանամեաց որդւոյն։

Ի՞նչ է գրութիւն. — Պահատան պատմութեան։

Ի՞նչ է խօսք. — Թարգման սրտի։

Ի՞նչ է լեզու. — Խարզազն օդոյ։

Ի՞նչ է օդ. — Պահապանիշ կինաց։

Ի՞նչ է կեանք. — Վակերումն հաճոյից, ցաւ աղէտից, ակնկալութիւն մահաց։

Ի՞նչ է մահ. — Պատահակա անխուսափելի, ճանապարհ անստոյգ, պատճառ արտասուաց վասն կենդանեաց, հաստատութիւն կտակաց, գող մարդկան։

Ի՞նչ է մարդ. — Գերի մահուան, անցաւոր ճանապարհորդ, կիւր ՚ի տան իւրում։

Ի՞նչ է երկինք. — Եարժական մթնութոր, կամար մեծատարած։

Ի՞նչ է ըստ. — Զահ ամենայն իրաց։

Ի՞նչ է օր. — Գրգիռ և շարժակիթ աշխատութեան։

Ի՞նչ է արեգակ. — Պայծառութիւն տիեզերաց, գեղեցկութիւն հաստատութեան, չնորհք ընութեան, փառաւորութիւն օրուան, բաժանարար ժամուց։

Ի՞նչ է երկիր, — Մայր ամենայնի որ անէ, դայեակ ամենայնի որ կեայ, շտեմարան կինաց, անդունդ որ զամենայն կլոնէ։

Ի՞նչ է ծով. — Ճանապարհ յանդգնութեան, սահմանածայր երկրի, օթևան գետաց, աղբիր անձրեաց։

Ի՞նչ է ձեռ. — Տարագրութիւն ամառան։

Ի՞նչ է գարուն. — Պատկեր կինաց։

Ի՞նչ է ամառ. — Զօրութիւն զարդարիչ երկրի, և հասունացոցից հնձոց։

Ի՞նչ է աշուն. — Շտեմարան տարւոյն։

Պրեմ Բ.

Ի՞նչ է տարին. — Քառամի կառք աշխարհի։

Ի՞նչ է խոտ. — Զգեստ երկրի։

Ի՞նչ են ընդեղէնք. — Բարեկամք բժշկաց և փառք խոհարարաց։

Ի՞նչ է այն բանն որ զգառինս կը քաղցրացնէ. — Անօթութիւն։

Ի՞նչ բանէ երկրէ չեն յոդիր մարդիկ. — Ի շահաստացութիւնէ։

Արթուրութեան քունը որին է. — Յոյզը։

Ի՞նչ է յոյս. — Զովացումն աշխատութեան։

Ի՞նչ է բարեկամութիւն. — Նմանութիւն սրտից։

Ի՞նչ է համար. — Ստուգութիւն անձանօթից։

Զօրատր դաս մը. — Հենրիկոս Զորորդ Գաղղոյ թագաւորը օր մ'որսորդութիւնէ ետքը իր ընկերներէն զատուելով առանձին պանդոկ մը կ'երթայ, և գառնալով պանդոկավետին կը հարցնէ թէ տառելի բան մ'ունի. Անիկա կարծելով թէ պարզ սպայ մ'է, կը պատասխանէ։

— Ոչ, Պարոն, շատ ուշ հասար։

Քայց թագաւորը գեղեցիկ կերպով պատրաստուած շամփուր մը տեսնելով, կը հարցնէ թէ որուն համար է այդ խորովածոյ միւր։

— Կերի յարկը բազմեալ մէկ քանի պարոնայց համար, կը պատասխանէ պանդոկավետ։

— Ուրեմն, բաւ Հենրիկոս, գնա և բայն պարոնայց թէ խոնջեալ և տաֆաննեալ ճանապարհորդ մ'եկեր է կարօտ զօրանալոյ մարմնոյն, և կը խնդրէ որ կամ առանձին մաս մը տրուի իրեն այս խորովածէն, կամ սեղանակցի իրենց հետ հատուցանելով յարժանն։ Պանդոկավետը կ'երթայ և կը ներկայացնէ առաջարկութիւնը. քայց անսնք կը մերժեն երկու պայմաններն ալ ու կ'ըսեն։

— Խորովածին գալով յաւելուածոյ չունիմք. խկ սեղանակցութեան նկատմանը՝ բայ ճանապարհորդին որ գոհ եմք մեր առանձին ընկերութենէն։

Քայց այս խոփերը բարձր ձայնով ըսելովին կը լսէ Հենրիկոս վարչէն, և սաստիկ առնուելով այնախիս տմարդի պատասխանէն, բոլոր իր թիկնապահներն և որսակիցները պանդոկը կը կանէն, և առանց խորախորչուրդ մուածութեան, իրեն բացակ թագաւոր, կը հրամայէ խարազանել այդ պարզնայքը, որպէս զի սորվին վնասով անձին ուրիշ անդամ աւելի բա-

10

բեկիրթ ըլւարու . և հրամանը կը կատարուի  
ամենայն խստութեամբ :

Տարակոյս չկայ որ տրուած գասը շատ  
ազդու և զօրաւոր էր . բայց այս օրուան  
օրս ոչ մի թագաւոր կը յանդգնի առ այն  
իբրև հասարակաց հայր ժողովուեան :

Ծորուրին պատճեալ . ՊԱՏՌՈՒԹԵԱՆ ԲՈՒՂ-  
ՂԱՐԱ . — Առեն մ'երր մարդիկ աւելի  
բարեկրօնք էին , կը հրամայէին ամենայնի ,  
թէ էնդանի և թէ անկենդան արարածոց .  
բայց կը պատմեն թէ ամենայն ինչ կերպա-  
րանափոխ եղած ըլլայ երր մարդիկ չարա-  
ցան :

Օրինակի համար , մարդ մը փայտ կտրե-  
լին և չեղակուտելին ետքը բաւական էր  
որ գաւազանաւ դպչի միայն . և աչա շեղջա-  
կոյտը կը սկսէր քալել ինքն իրեն ինչ ուղ-  
ղութեամբ որ կը հրամայուէր :

Բայց եղաւ որ մ'որ կնոյ մէկը շեղջա-  
կոյտը դիմացէն քալեցնելու ատեն , ձան-  
ձրանալով քովէն հետի քալելին , կը նըս-  
տի վրան . այն ատեն շեղջակոյտը կ'ան-  
սաստէ և կը գաղրի քալելին : Կինը կը  
ցանու . և կը սկսի զարնել յաջ և յահեակ ,  
բայց փայրագարու . շեղջակոյտն այլ և մի  
յառաջիր : Այս ատեն ձայն մը կուգայ  
երկնէն որ կ'ըսէ :

« Կին դու , որովհետեւ ծուլացար և չա-  
րացար , փոխանակ շեղջակոյտն զքեզ տա-  
նելու , դու զանիկա տանիս » :

Այս ատեն կինը կը ստիպուի քակել գո-  
տին , կապել փայտերն ՚ի մի խուրճ , առ-  
նուլ թիկանցը վրայ ու տանիլ :

Գերազանցուրին ընկերութեան . — Մար-  
դիկ ոչ կրնան ապրիլ , ոչ բարւոք ապրիլ ,  
ոչ մարդ ըլլալ և ոչ երջանիկ՝ առանց մէկ-  
մէկու . կապուած են իրարու հետ հասա-  
րակաց կարևորութեան կապու , իրա-  
քանչիւր անհատ բաւական չէ ինքն իրմով .  
կերպով մը պէտք ունի բազմացնել ինք  
դինքը բազմաց ձեռնտութեամբ . և կար-  
ծես թէ մենք առանձին ամբողջ մարմնն  
չենք , այլ հատեալ մասունք զոր ընկերու-  
թինն կը միացնէ : Զրկեալք՝ արդարու-  
թին կը խնդրեն , տկարք՝ պէտք ունին զօ-  
րանալց , և սգաւորք՝ միմիթարութեան :

## Ա Խ Ա Ծ

— Նպատակը տեսնելը գերբին է , բայց նետը  
նպատակին հանդիպյնելը գտուարին :

— Հաւատարիմ բարեկամն որմնյ նման է , որ  
քովի ծառը չըր ալ ըլլայ՝ սիրով անոր կը պըլ-  
լուի :

— Եղածնէս աւելի կը կարծինք զմեզ , ու կար-  
ծածնէս ալ աւելի կ'ուղենք երկնալ :

— Արուն որ կարողութիւնը հաւասար է իր  
բաղձանացը , երջանիկ է այնպիսին . և որովհեակ  
մարդուս կարողութիւնը քիչ բանի կը համար ,  
անոր համար պէտք է չափաւորէ իր բաղձանացը :

— Կեղծաւորն իր անկեղծութիւնը կը գովէ ,  
ագահն իր առանձանեանութիւնը , աշխարհասէրն  
իր համեստութիւնը , մեկ խօսքով չարն իր բա-  
րութիւնը :

— Խմառութիւնը ջահ մ'է որ չի ծածկուիր ,  
որչափ մուծը տանիս , այնշաբ աւելի կը փայլի :

— Արուն թէլ մէլ աւելի գլունկ կը դանա  
քան թէ դէմք :

— Մարդս իրմէն վեր եղած բանն իր երջան .  
կութիւնը կը համարի :

— Հաւատք առանց բարեգործութեան դան-  
դակ մ'է առանց լեզուի :

— Իշխանաց սիրոս քիչ մը մոմէ շնորուած պէ-  
տի ըլլայ , քիչ մը չափարէ , քիչ մ'ալ պղնձէ :

— Մարդու կիրքը տառագասասի նման է , վոր-  
ուեն նաև պէտք դիմէ և անոնցմով նաւը նաւա-  
հանգիստ հացանել :

— Տքիւութիւնը գիշեր է մտաց , անզուսին և  
անաստղ գիշեր :

## Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Կարդ աշխարհի այլակիոնեալ յիս թըւի .

Նախ աշակերտ դայ ուսուցիչ ըզենին .

Նախ արտավագր ապա արբայ երեւի .

Յառաջ գեպիր և քահանայ հետեւի .

Յիս նախ ամառն ապա գարուն տեսանի .

Յառաջ գիշեր յետոյ երեւի յաշորդի :

Պինդ ինդրեսմիք , ո ընթերցող , քաջադէտ ,

և զիս տեսցես զի ակներև կամ յաւէտ :

